Հավելված 1
«ՀՀ-ՏՄՊՊՀ-ՄԱԾՁԲ-20/4» ծածկագրով
մեկ անձից գնման հրավերի

ՀՀ ՏՄՊՀՀ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՈՂ ՍԱՐՔԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ-ՏՄՊՊՀ-ՄԱԾՁԲ-20/4

ք. Երևան «17» 02 2020թ.

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովն, ի դեմս գլխավոր քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Վահանյանի, որը գործում է հանձնաժողովի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Ա/Ձ Էդմոնդ Միրզախանյան (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է պատճենահանող սարքերի վերանորոգման մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 520000 (հինգ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ,

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.
Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.
Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[24][341]

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[25][352]

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

---

[24] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[25] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով»	Ա/Ձ Էդմոնդ Միրզախանյան
Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5բ	Հասցե՝ ք.Երևան, Պարոնյան 1
ՀՀ ՖՆ Կենտրոնական գանձապետարան	Կոնվերս-Բանկ ՓԲԸ
գործառնական վարչություն	h/h 1930059220940100
Հ/Հ 900011566057	ՀՎՀՀ 83629841
ՀՎՀՀ 01538354	Է. Միրզախանյան
Ա. Վահանյան	
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«17» 02 2020թ. կնքված
ՀՀ-ՏՄՊՊՀ-ՄԱԾՁԲ-20/4 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	առավելագույն գինը	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	**Պատճենահանող սարքերի վերանորոգման ծառայություններ**	**Կատարողը պետք է մատուցի HP Laser Jet1 1536 dnf MFP և համարժեք լազերային տպիչ սարքերի սպասարկման ծառայություններ: Ծառայությունների մատուցումը իրականացվում է 1-2 աշխատանքային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացումից հետո գրավոր կամ բանավոր):**	Դրամ	350000	1	ՀՀ ք. Երևան, Մհեր Մկրտչյան 5ᵉ	**Ծառայությունների մատուցումը կիրականացվի պայմանագրով սահմանված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը:**
		որից՝	չափման միավորը	Միավորի առավելագույն գինը			
		Դիագնոստիկա	Դրամ	անվճար			
		Պրոֆիլակտիկա	Դրամ	6000			
		Քարթրիջի լիցքավորում(առանց տոների): Երաշխիք՝ նվազագույնը 1 400 էջ՝ լիցքավորման պահից	Դրամ	2000			
		Քարթրիջի լիցքավորում(ներառյալ տոները): Երաշխիք՝ նվազագույնը 1 400 էջ՝ լիցքավորման պահից	Դրամ	3000			
		Թմբուկի փոխարինում: Երաշխիք՝ նվազագույնը 1 400 էջ՝ վերանորոգման պահից	Դրամ	3000			
		Մագնիսական գլանակի փոխարինում: Երաշխիք՝ նվազագույնը 1 400 էջ՝ վերանորոգման պահից	Դրամ	3000			

		Ռետինե մաքրող փոխարինում: Երաշխիք՝ նվազագույնը 1 400 էջ՝ վերանորոգման պահից:	Դրամ	2000			
		Ռետինե գլանակի փոխարինում: Երաշխիք՝ նվազագույնը 1 400 էջ՝ վերանորոգման պահից	Դրամ	2000			
		Վերանորոգում (առանց պահեստամասերի)	Դրամ	անվճար			
		Վառարանի թերմոթաղանթի փոխարինում (ներառյալ վառարանի թերմոթաղանթը): Երաշխիք՝ նվազագույնը 20 000 – 25 000 էջ՝ փոխարինման պահից:	Դրամ	8000			
		Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում (ներառյալ վառարանի ռետինե լիսեռը): Երաշխիք՝ նվազագույնը 40 000 էջ՝ փոխարինման պահից:	Դրամ	12000			
		Ռետինե լիսեռի և բաժանարարի փոխարինում (ներառյալ թղթի մատուցման ռետինե լիսեռը և բաժանարար հարթակը): Երաշխիք՝ նվազագույնը 20 000 – 25 000 էջ՝ փոխարինման պահից:	Դրամ	6000			
		Կատարողը պետք է մատուցի HP Laserjet Pro MFP M426dw և համարժեք լազերային տպիչ սարքերի սպասարկման ծառայություններ: Ծառայությունների մատուցումը իրականացվում է 1-2 աշխատանքային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացումից հետո գրավոր կամ բանավոր):					
		որից՝	չափման միավորը	Միավորի առավելագույն գինը			
		Դիագնոստիկա	Դրամ	անվճար			
		Պրոֆիլակտիկա	Դրամ	6000			
		Տոներային քարթրիջի լիցքավորում (առանց տոների): Երաշխիք՝ նվազագույնը 2 000 էջ՝ լիցքավորման պահից	Դրամ	2000			
		Տոներային քարթրիջի լիցքավորում (ներառյալ տոները):					

		Երաշխիք՝ նվազագույնը 2 000 էջ՝ լիցքավորման պահից		3000			
		Թմբուկի փոխարինում Երաշխիք՝ նվազագույնը 2 000 էջ՝ փոխարինման պահից	Դրամ	3000			
		Մագնիսական գլանակի փոխարինում: Երաշխիք՝ նվազագույնը 2 000 էջ՝ փոխարինման պահից	Դրամ	3000			
		Ռետինե մաքրող փոխարինում: Երաշխիք՝ նվազագույնը 2 000 էջ՝ փոխարինման պահից	Դրամ	2000			
		Ռետինե գլանակի փոխարինում: Երաշխիք՝ նվազագույնը 2 000 էջ՝ փոխարինման պահից	Դրամ	2000			
		Տպիչ սարքերի վերանորոգում (առանց պահեստամասերի)	Դրամ	անվճար			
		Թերմոթաղանթի փոխարինում (ներառյալ վառարանի թերմոթաղանթը): Երաշխիք՝ նվազագույնը 20 000 – 25 000 էջ՝ փոխարինման պահից:	Դրամ	8000			
		Ռետինե լիսեռի փոխարինում (ներառյալ վառարանի ռետինե լիսեռը): Երաշխիք՝ նվազագույնը 40 000 էջ՝ փոխարինման պահից:	Դրամ	12000			
		Ռետինե լիսեռի և բաժանարարի փոխարինում (ներառյալ թղթի մատուցման ռետինե լիսեռը և բաժանարար հարթակը): Երաշխիք՝ նվազագույնը 20 000 – 25 000 էջ՝ փոխարինման պահից:	Դրամ	6000			
		Կատարողը պետք է մատուցի HP Color LaserJet Pro MFP M477fnw և համարժեք լազերային տպիչ սարքերի սպասարկման ծառայություններ: Ծառայությունների մատուցումը իրականացվում է 1-2 աշխատանքային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացումից հետո գրավոր կամ բանավոր):					
		որից՝	չափման միավորը	Միավորի առավելագույն գինը			
		Դիագնոստիկա	Դրամ	Անվճար			
		Պրոֆիլակտիկա	Դրամ	6000			
		Տոներային քարթրիջի լիցքավորում(առանց տոների): Երաշխիք՝ նվազագույնը 1 400 էջ՝ լիցքավորման պահից	Դրամ	4000			
		Տոներային քարթրիջի լիցքավորում(ներառյալ տոները և չիպի փոխարինում): Երաշխիք՝ նվազագույնը 1 400 էջ՝	Դրամ				

		լիցքավորման պահից		10000			
		Թմբուկի փոխարինում; Երաշխիք՝ նվազագույնը 1 400 էջ՝ փոխարինման պահից	Դրամ	3000			
		Վերանորոգում (առանց պահեստամասերի)	Դրամ	Անվճար			
		Վառարանի թերմոթաղանթի փոխարինում (ներառյալ վառարանի թերմոթաղանթը): Երաշխիք՝ նվազագույնը 20 000 – 25 000 էջ՝ փոխարինման պահից:	Դրամ	14000			
		Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում (ներառյալ վառարանի ռետինե լիսեռը): Երաշխիք՝ նվազագույնը 40 000 էջ՝ փոխարինման պահից:	Դրամ	10000			
		Թղթի մատուցման ռետինե լիսեռի և բաժանարարի փոխարինում (ներառյալ թղթի մատուցման ռետինե լիսեռը և բաժանարար հարթակը): Երաշխիք՝ նվազագույնը 20 000 – 25 000 էջ՝ փոխարինման պահից:	Դրամ	12000			
		Կատարողը պետք է մատուցի Hp color Ljpro MFP M 281 fdw և համարժեք լազերային տպիչ սարքերի սպասարկման ծառայություններ: Ծառայությունների մատուցումը իրականացվում է 1-2 աշխատանքային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացումից հետո գրավոր կամ բանավոր):					
		որից՝	չափման միավորը	Միավորի առավելագույն գինը			
		Դիագնոստիկա	Դրամ	Անվճար			
		Պրոֆիլակտիկա	Դրամ	6000			
		Տոներային քարթրիջի լիցքավորում (առանց տոների): Երաշխիք՝ նվազագույնը 1 400 էջ՝ լիցքավորման պահից	Դրամ	4000			
		Տոներային քարթրիջի լիցքավորում (ներառյալ տոները և չիպի փոխարինում): Երաշխիք՝ նվազագույնը 1 400 էջ՝ լիցքավորման պահից	Դրամ	10000			
		Տոներային քարթրիջի թմբուկի փոխարինում: Երաշխիք՝ նվազագույնը 1 400 էջ՝ փոխարինման պահից	Դրամ	3000			
		Վերանորոգում (առանց պահեստամասերի)	Դրամ	Անվճար			
		Վառարանի թերմոթաղանթի փոխարինում (ներառյալ	Դրամ				

		վառարանի թերմոթաղանթը): Երաշխիք՝ նվազագույնը 20 000 – 25 000 էջ՝ փոխարինման պահից:		10000			
		Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում (ներառյալ վառարանի ռետինե լիսեռը): Երաշխիք՝ նվազագույնը 40 000 էջ՝ փոխարինման պահից:	Դրամ	12000			
		Թղթի մատուցման ռետինե լիսեռի և բաժանարարի փոխարինում (ներառյալ թղթի մատուցման ռետինե լիսեռը և բաժանարար հարթակը): Երաշխիք՝ նվազագույնը 20 000 – 25 000 էջ՝ փոխարինման պահից:	Դրամ	10000			
		Կատարողը պետք է մատուցի HP 1010 և համարժեք լազերային տպիչ սարքերի սպասարկման ծառայություններ: Ծառայությունների մատուցումը իրականացվում է 1-2 աշխատանքային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացումից հետո գրավոր կամ բանավոր):					
		որից՝	չափման միավորը	Միավորի առավելագույն գինը			
		Դիագնոստիկա	Դրամ	Անվճար			
		Պրոֆիլակտիկա	Դրամ	6000			
		Քարթրիջի լիցքավորում (առանց տոների): Երաշխիք՝ նվազագույնը 1 400 էջ՝ լիցքավորման պահից	Դրամ	2000			
		Քարթրիջի լիցքավորում (ներառյալ տոները): Երաշխիք՝ նվազագույնը 1 400 էջ՝ լիցքավորման պահից	Դրամ	3000			
		թմբուկի փոխարինում: Երաշխիք՝ նվազագույնը 1 400 էջ՝ փոխարինման պահից	Դրամ	3000			
		մագնիսական գլանակի փոխարինում: Երաշխիք՝ նվազագույնը 1 400 էջ՝ փոխարինման պահից	Դրամ	3000			
		ռետինե մաքրող փոխարինում: Երաշխիք՝ նվազագույնը 1 400 էջ՝ փոխարինման պահից	Դրամ	2000			
		ռետինե գլանակի փոխարինում: Երաշխիք՝ նվազագույնը 1 400 էջ՝ փոխարինման պահից	Դրամ	2000			
		Վերանորոգում (առանց պահեստամասերի)	Դրամ	Անվճար			
		Վառարանի թերմոթաղանթի փոխարինում (ներառյալ վառարանի թերմոթաղանթը): Երաշխիք՝ նվազագույնը 20 000 – 25 000 էջ՝ փոխարինման պահից:	Դրամ	8000			

		Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում (ներառյալ վառարանի ռետինե լիսեռը): Երաշխիք՝ նվազագույնը 40 000 էջ՝ փոխարինման պահից:	Դրամ	12000			
		Թղթի մատուցման ռետինե լիսեռի և բաժանարարի փոխարինում (ներառյալ թղթի մատուցման ռետինե լիսեռը և բաժանարար հարթակը): Երաշխիք՝ նվազագույնը 20 000 – 25 000 էջ՝ փոխարինման պահից:	Դրամ	6000			
		Կատարողը պետք է մատուցի HP 132 և համարժեք լազերային տպիչ սարքերի սպասարկման ծառայություններ: Ծառայությունների մատուցումը իրականացվում է 1-2 աշխատանքային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացումից հետո գրավոր կամ բանավոր):					
		որից՝	չափման միավորը	Միավորի առավելագույն գինը			
		Դիագնոստիկա	Դրամ	Անվճար			
		Պրոֆիլակտիկա	Դրամ	6000			
		Քարթրիջի լիցքավորում (առանց տոների): Երաշխիք՝ նվազագույնը 1 400 էջ՝ լիցքավորման պահից:	Դրամ	2000			
		Տոներային քարթրիջի լիցքավորում(ներառյալ տոները): Երաշխիք՝ նվազագույնը 1 400 էջ՝ լիցքավորման պահից	Դրամ	3000			
		թմբուկի փոխարինում: Երաշխիք՝ նվազագույնը 1 400 էջ՝ փոխարինման պահից	Դրամ	3000			
		մագնիսական գլանակի փոխարինում: Երաշխիք՝ նվազագույնը 1 400 էջ՝ փոխարինման պահից	Դրամ	3000			
		ռետինե մաքրող փոխարինում: Երաշխիք՝ նվազագույնը 1 400 էջ՝ փոխարինման պահից	Դրամ	2000			
		ռետինե գլանակի փոխարինում: Երաշխիք՝ նվազագույնը 1 400 էջ՝ փոխարինման պահից	Դրամ	2000			
		Վերանորոգում (առանց պահեստամասերի)	Դրամ	Անվճար			
		Վառարանի թերմոթաղանթի փոխարինում (ներառյալ վառարանի թերմոթաղանթը): Երաշխիք՝ նվազագույնը 20 000 – 25 000 էջ՝ փոխարինման պահից:	Դրամ	8000			
		Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում (ներառյալ վառարանի ռետինե լիսեռը): Երաշխիք՝ նվազագույնը 40 000	Դրամ				

		էջ՝ փոխարինման պահից:		12000			
		Թղթի մատուցման ռետինե լիսեռի և բաժանարարի փոխարինում (ներառյալ թղթի մատուցման ռետինե լիսեռը և բաժանարար հարթակը): Երաշխիք՝ նվազագույնը 20 000 – 25 000 էջ՝ փոխարինման պահից:	Դրամ	6000			
		Կատարողը պետք է մատուցի HP 500 և համարժեք լազերային տպիչ սարքերի սպասարկման ծառայություններ: Ծառայությունների մատուցումը իրականացվում է 1-2 աշխատանքային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացումից հետո գրավոր կամ բանավոր):					
		որից՝	չափման միավորը	Միավորի առավելագույն գինը			
		Դիագնոստիկա	Դրամ	Անվճար			
		Պրոֆիլակտիկա	Դրամ	6000			
		Տոներային քարթրիջի լիցքավորում: Երաշխիք՝ նվազագույնը 5 000 էջ՝ լիցքավորման պահից	Դրամ	8000			
		թմբուկի փոխարինում	Դրամ	6000			
		ռետինե մաքրող փոխարինում	Դրամ	8000			
		ռետինե գլանակի փոխարինում	Դրամ	8000			
		Վերանորոգում (առանց պահեստամասերի)	Դրամ	Անվճար			
		Վառարանի թերմոթաղանթի փոխարինում (ներառյալ վառարանի թերմոթաղանթը): Երաշխիք՝ նվազագույնը 20 000 – 25 000 էջ՝ փոխարինման պահից:	Դրամ	15000			
		Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում (ներառյալ վառարանի ռետինե լիսեռը): Երաշխիք՝ նվազագույնը 40 000 էջ՝ փոխարինման պահից:	Դրամ	20000			
		Թղթի մատուցման ռետինե լիսեռի և բաժանարարի փոխարինում (ներառյալ թղթի մատուցման ռետինե լիսեռը և բաժանարար հարթակը): Երաշխիք՝ նվազագույնը 20 000 – 25 000 էջ՝ փոխարինման պահից:	Դրամ	10000			
		Կատարողը պետք է մատուցի Canon IR 2520 և համարժեք լազերային տպիչ սարքերի սպասարկման ծառայություններ: Ծառայությունների մատուցումը իրականացվում է 1-2 աշխատանքային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացումից հետո գրավոր կամ բանավոր):					

		որից՝	չափման միավորը	Միավորի առավելագույն գինը			
		Դիագնոստիկա	Դրամ	Անվճար			
		Պրոֆիլակտիկա	Դրամ	6000			
		Տոներային քարթրիջի փոխարինում: Երաշխիք՝ նվազագույնը 14 500 էջ՝ փոխարինման պահից	Դրամ	14000			
		թմբուկի փոխարինում	Դրամ	8000			
		Վերանորոգում (առանց պահեստամասերի)	Դրամ	Անվճար			
		Վառարանի թերմոթաղանթի փոխարինում (ներառյալ վառարանի թերմոթաղանթը): Երաշխիք՝ նվազագույնը 20 000 – 25 000 էջ՝ փոխարինման պահից:	Դրամ	25000			
		Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում (ներառյալ վառարանի ռետինե լիսեռը): Երաշխիք՝ նվազագույնը 40 000 էջ՝ փոխարինման պահից:	Դրամ	30000			
		Թղթի մատուցման ռետինե լիսեռի և բաժանարարի փոխարինում (ներառյալ թղթի մատուցման ռետինե լիսեռը և բաժանարար հարթակը): Երաշխիք՝ նվազագույնը 20 000 – 25 000 էջ՝ փոխարինման պահից:	Դրամ	12000			
		Կատարողը պետք է մատուցի Canon MF421dw և համարժեք լազերային տպիչ սարքերի սպասարկման ծառայություններ: Ծառայությունների մատուցումը իրականացվում է 1-2 աշխատանքային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացումից հետո գրավոր կամ բանավոր):					
		որից՝	չափման միավորը	Միավորի առավելագույն գինը			
		Դիագնոստիկա	Դրամ	Անվճար			
		Պրոֆիլակտիկա	Դրամ	6000			
		Տոներային քարթրիջի լիցքավորում(առանց տոների): Երաշխիք՝ նվազագույնը 2 100 էջ՝ փոխարինման պահից	Դրամ	2000			
		Տոներային քարթրիջի լիցքավորում(ներառյալ տոները): Երաշխիք՝ նվազագույնը 2 100 էջ՝ փոխարինման պահից	Դրամ	3000			
		Թմբուկի փոխարինում: Երաշխիք՝ նվազագույնը 2 100 էջ՝	Դրամ	3000			

		փոխարինման պահից					
		Մագնիսական գլանակի փոխարինում: Երաշխիք՝ նվազագույնը 2 100 էջ՝ փոխարինման պահից	Դրամ	3000			
		Ռետինե մաքրող փոխարինում: Երաշխիք՝ նվազագույնը 2 100 էջ՝ փոխարինման պահից	Դրամ	2000			
		Ռետինե գլանակի փոխարինում: Երաշխիք՝ նվազագույնը 2 100 էջ՝ փոխարինման պահից	Դրամ	2000			
		Վերանորոգում (առանց պահեստամասերի)	Դրամ	Անվճար			
		Վառարանի թերմոթաղանթի փոխարինում (ներառյալ վառարանի թերմոթաղանթը): Երաշխիք՝ նվազագույնը 20 000 – 25 000 էջ՝ փոխարինման պահից:	Դրամ	8000			
		Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում (ներառյալ վառարանի ռետինե լիսեռը): Երաշխիք՝ նվազագույնը 40 000 էջ՝ փոխարինման պահից:	Դրամ	12000			
		Թղթի մատուցման ռետինե լիսեռի և բաժանարարի փոխարինում (ներառյալ թղթի մատուցման ռետինե լիսեռը և բաժանարար հարթակը): Երաշխիք՝ նվազագույնը 20 000 – 25 000 էջ՝ փոխարինման պահից:	Դրամ	6000			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«ՀՀ տնտեսական մրցակցության
պաշտպանության պետական
հանձնաժողով»
Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5բ
ՀՀ ՖՆ Կենտրոնական գանձապետարան
գործառնական վարչություն
Հ/Հ 900011566057
ՀՎՀՀ 01538354
Ա. Վահանյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Ա/Ձ Էդմոնդ Միրզախանյան
Հասցե՝ ք.Երևան, Պարոնյան 1
Կոնվերս-Բանկ ՓԲԸ
հ/հ 1930059220940100
ՀՎՀՀ 83629841
Է. Միրզախանյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«17» 02 2020թ. կնքված
ՀՀ-ՏՄՊՊՀ-ՄԱԾՁԲ-20/4 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության														
Հ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում պատճենահանող սարքերի վերանորոգման											
			Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Ընդամենը
1	50311240/1	պատճենահանող սարքերի վերանորոգման ծառայություններ	35 000			122 500			210 000			350000			350000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
Հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի»
Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5բ
ՀՀ ՖՆ Կենտրոնական գանձապետարան
գործառնական վարչություն
Հ/Հ 900011566057
ՀՎՀՀ 01538354
Ա. Վահանյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Էդմոնդ Միրզախանյան
Հասցե՝ ք. Երևան, Պարոնյան 1
Կոնվերս-Բանկ ՓԲԸ
h/h 1930059220940100
ՀՎՀՀ 83629841
Է. Միրզախանյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«17» 02 2020թ. կնքված
ՀՀ-ՏՄՊՊՀ-ՄԱԾՁԲ-20/4 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 17 » 02 2020թ. կնքված
ՀՀ-ՏՄՊՊՀ-ՄԱԾՁԲ-20/4 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն